Հավելված

Приложение

Երևանի քաղաքապետ
պ-ն Ե.Վ.Զաքարյանին

2004 թ. մայիսի 5-ին լրանում է սովետական գեղագիտության և երաժշտագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արշակ Աբգարի Ադամյանի ծննդյան 120-ամյակը: Բազմակողմանի արտակարգ օժտված անձնավորություն՝ Ա.Ա.Ադամյանը եղել է նաև դաշնակահար, կոմպոզիտոր, դիրիժոր, իսկ նրա գործունեությունը՝ որպես կազմակերպչի և ղեկավարի զգալի դեր է կատարել Երևանում, Թբիլիսիում և Լենինգրադում երաժշտական մշակույթի և բարձրագույն երաժշտական կրթության զարգացման գործում:

Ա.Ա.Ադամյանը սերում էր մշակույթի պատմության մեջ նկատելի հետք թողած ընտանիքից: Նրա ավագ եղբայր Հովհաննես Աբգարի Ադամյանը հայտնի գյուտարար էր, որը էական ավանդ ներդրեց սև-սպիտակ և հատկապես գունավոր հեռուստատեսության ստեղծման մեջ: 1908-1914 թթ. մեծ համբավ էր հանել Ադամյան քույրեր՝ Եղենայի և Եվգենիայի համերգային գործունեությունը, որոնք դաշնամուրային դուետով հանդես էին գալիս Ռուսաստանում և Եվրոպայի տարբեր երկրներում:

1920 թ. Ա.Ադամյանը աշխատել է Վրաստանում՝ մինչև այնտեղ սովետական իշխանության հաստատումը, որպես Սովետական Հայաստանի դիվանագիտական առաքելության քարտուղար: 1921-1924 թթ. նա գլխավորում է Հայաստանի մշակույթի տան Թիֆլիսի խորհուրդը («Հայարտուն»):

1924-1926 թթ. Ա.Ադամյանը եղել է Երևանի պետական կոնսերվատորիայի տնօրենը: Այդ տարիներին նա Ա.Սպենդիարյանի հետ միասին կազմակերպում է Սովետական Հա-

յաստանում առաջին սիմֆոնիկ նվագախումբը և հանդես գալիս որպես նրա առաջին դիրիժորը:

1926-1936 թթ. նա կրկին Թիֆլիսում է, որտեղ վարում է մեծ մշակութա-կազմակերպչական աշխատանք Անդրկովկասյան գործադիր կոմիտեում և որպես երաժշտական հաղորդումների բաժնի վարիչ՝ Անդրկովկասյան և Վրացական ռադիոկոմիտեում:

1936 թ. Ա.Ադամյանը հրավիրվում է Լենինգրադ, որտեղ աշխատանքի է անցնում որպես թատրոնի և երաժշտության ինստիտուտի գիտնական քարտուղար, իսկ հետագայում նաև Լենինգրադի կոնսերվատորիայի պատմա-տեսական ֆակուլտետի դեկան: 1941 թ. Լենինգրադի կոնսերվատորիայի հետ էվակուացվում է Թաշկենտ:

1943-ին Ա.Ադամյանը ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր արվեստի գործերի գծով կոմիտեի կողմից հրավիրվում է Երևան: Այստեղ 1943-1946 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում, վարելով գեղագիտություն դասընթացը և անցկացնելով պարապմունքներ ասպիրանտների հետ: 1944-1949 թթ. Ա.Ադամյանը աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորում, որպես ավագ գիտական աշխատող, հետազոտելով գեղագիտության տեսության և հայ գեղագիտական մտքի պատմության հարցերը: 1945-ին նրան շնորհվում է ՀԽՍՀ Արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչումը:

Ա.Ադամյանը թողել է մեծ գրական-տեսական ժառանգություն, որի մի մասը ամփոփված է նրա աշխատությունների երեք ժողովածուներում: Նրա գործունեությանը նվիրված է «Հայ գեղագիտական (էսթետիկական) մտքի պատմությունից» գրքաշարի 4-րդ և 5-րդ պրակները: Կան նաև հրապարակման կարոտ նյութեր:

Հատկապես պետք է նշել Ա.Ադամյանի՝ որպես հայ գեղագիտական մտքի պատմության ուսումնասիրման առաջնեկի դերը: Նրա աշխատությունները մեծ արձագանք են ստացել մեր երկրում և նրա սահմաններից դուրս:

Դիմելով ձեզ խնդրում ենք որոշում կայացնել նրա տան պատին (Մաշտոցի պողոտա, N43, բն.11ա) հուշատախտակ ամրացնելու մասին:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության
և իրավունքի ինստիտուտի տնօրեն՝ Գ.Ա.Պողոսյան

Կոմիտասի անվան Երևանի
պետական Կոնսերվատորիայի
ռեկտոր՝ Ս.Գ.Սարաջև

ՀՀ ԳԱԱ արվեստի
ինստիտուտի տնօրեն՝ Ա.Վ.Աղասյան

ՀՀ Գեղարվեստի
Ակադեմիայի նախագահ՝ Ա.Է.Իսաբեկյան